«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն ՝ Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ

Դաստիարակ ՝ Օֆելյա Սարգսյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. ԳԼՈՒԽ 1. Ազգային տոներ----------4
3. 1.2 Ազգային տոները որպես հայեցի դաստիարակության կարևոր նախադրյալ----4
4. ԳԼՈՒԽ 2. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում----------5
5. 2.1 Համբաձման տոնը որպես կրթական գործունեության մի մաս----------6
6. 2.2Զատկի տոնի կարևորությունը կրթական գործընթացում----------7
7. 2.3Ամանոր ----------11
8. Եզրակացություն----------17
9. Գրականության ցանկ----------18

Ներածություն

Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:

Ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության համար թե՛ գիտելիքների հարստացման, թե՛ երաժշտական կարողությունների ու ճաշակի ձևավորման, թե՛ գեղարվեստական հմտությունների զարգացման տեսանկյունից:

Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:

Հետազոտության նպատակը – Ազգային տոների և ավանդույթների միջոցով երեխաների ճանաչողական և մոտիվացիոն կարողությունների զարգացումը:

Հետազոտության ընթացքը – Հետազոտական աշխատանքը կատարվել է <<Աշտարակ համայնքի Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում , իմ կողմից որպես հետազոտության առանցք ընտրվել է միջին նախադպրոցական տարիքի քսանչորս երեխա, ստեղծվել է համապատասխան մանկավարժական պայմաններ, իրականացվել է որոշակի մանկավարժական աշխատանք, որը նպաստել է նախադպրոցականի հայեցի դաստիարակությանը: Հետազոտական աշխատանքի իրականացման համար օգտվել եմ դիտման, զրույցի, զննական, գործնական, ինչպես նաև ինտերակտիվ մեթոդներից:

Հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտվեց.

Երեխաների հետաքրքրասիրությունը դեպի ազգային արժեքներ, ազգային խաղերը, տոները, խաղիկները, տաղիկները:

ԳԼՈՒԽ 1

Ազգային տոներ

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

1.1Ազգային տոները որպես հայեցի դաստիարակության կարևոր նախադրյալ

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ: Այստեղ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բնության առաջին հատիկները: Հայ երեխայի հոգում բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:[1, էջ60]

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար:

Մենք՝ մանկավարժներս, պարտավոր են ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

ԳԼՈՒԽ 2

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Ինչ ծավալի էլ լինի միջոցառումը, միևնույն է երեխան կամա թե ակամա դառնում է դրանց մասնակիցն ու դիտորդը: Այդ տպավորությունները աստիճանաբար երեխայի մտապատկերում իմաստավորվում են և դառնում տարրական գիտելիքներ՝ շրջապատի ճանաչողական համակարգում:

Փորձը ցույց է տալիս, որ երեխայի գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական, ընտանեկան ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող: Նա արդեն պատկերացում ունի դրանց վերաբերյալ և մեծ սիրով ու ոգևորությամբ մասնակցում է այդ հանիսություններին, հաճախ էլ լրացումներով ու հիշոցումներով օգնում է դաստիարակին:

Առանձնակի հետաքրքրությամբ են անցնում Սուրբ Ծնունդն ու Ամանորը, Զատիկը, Համբարձման տոնը, Վարդավառը: Եթե Սուրբ Ծննդի և Զատկի տոնակատարությունները մենք տոնում ենք մանկապարտեզում, ապա Վարդավառը անպայման կազմակերպվում են բնության գեղատեսիլ վայրերում: Երեխաներին ուղեկցում, հաճախ էլ միջոցառմանը մասնակից են դառնում տատիկները և մայրիկները; Նրանք սիրով և ոգևորությամբ երեխաների հետ միասին երգում են:

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այսօր, հատկապես գյուղական վայրերում, դեռ կարելի է տեսնել փոքրիկ «հարսիկի» ձեռքը բռնած մանկանց, ովքեր Զանգյուլումի գովքի տեսարանն են ներկայացնում: Կան վայրեր, որտեղ դեռ պահպանվել է Համբարձման ծեսը և իրականացվում է: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով,

ծիսական և մանկական խաղեր խաղալով: Խաղային նախադրյալների հետ մեկտեղ առարկայական գործունեությունը պայմաններ է ստեղծում և նպաստում արդյունավետ գեղարվեստական գործունեության (նկարչության, ծեփի, կառուցողական գործունեության) տարրերի դրսևորմանը: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու, իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստական գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, որն իր կարևոր ազդեցությունն է թողնում երեխայի զարգացման բոլոր ոլորտների վրա:

2.1 Համբաձման տոնը որպես կրթական գործունեության մի մաս

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր երևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներորդ օրը նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին, ապա ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց նրանց և լեռան գագաթից սկսեց համբառնալ երկինք: Ծուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից: Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Ձատիկից քառասուն օր անց և, պայմանավորված լինելով Ձատիկով, բնականաբար, այն շարժական է և ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ տոնվում է հինգշաբթի: Առնելով մարդկային մեր բնությունը՝ Քրիստոսն իր գալուստով մաքրեց ու օրհնեց անեծքով դատապարտված արարածներին: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին: Օրվա շարականը հիշատակում է Համբարձման դեպքը և ակնարկում նաև Ս. Հոգու գալստյան մասին. «Նստեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ վերևից զորություն ստանաք»: Եթե Ձատկի տոնին առանձնանանում , զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքները, ապա Համբարձմանն ակնկալվում է ցանված բերքի աճն ու փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիս դաշտերը և երգ-պարով, ուրախություններով սիրաշահում Մայր բնությանը: Համբարձումը բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի տոն է: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ, այսինքն՝ այն պահի, երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացքը վեր է պարզում և Աստծուց ու բնությունից ակնկալում հատուցում:

Համբարձման տոնը մեզ մոտ տրում է մեկ շաբաթ: Ծաղիկներ ենք հավաում , պսակներ հյուսում, յոթ աղբյուրից ջուր վերցնում: Տոնական օրվա առավոտյան երեխաները երգելով ջանգյուլումի երգերը՝ ծնողների ուղեկցությամբ այցելում են յոթ տուն; Յուրաքանչյուր տան

բակում երգում են ջանգյուլումի մաղթանքները, տան գլխավոր անդամին նվիրում են ծաղկե խաչը, վերցնում են ծաղկաբաժինը և բռնում ծաղկաշատ դաշտի ճանապարհը: Երեխաները շրջան կազմած նստում են ծաղիկների մեջ, իսկ սպիտակ շղարշով ծածկված մի աղջիկ հերթով հանում է երեխաների գցած վիճակները:

Այս տարի մեր մանկապարտեզի սաները ևս իրականացրին Համբարձման տոնին նվիրված մի հետաքրքրի միջոցառում, որը նպատակ ուներ երեխաներին ծանոթացնել ազգային տոներին և ծեսերին: Ստորև ներկայացնեմ նկարներ.

2.3Զատկի տոնի կարևորությունը կրթական գործընթացում

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարից և լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Որոշ ուսումնասիրողներ այն նմանեցնում են հրեաների Պասեքի հետ (Պասեքը, որ նշանակում է ելք, հրեաների ամենասիրված տոնն է և խորհրդանշում է Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր նրանց ելքը): Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը,

ծիծեռնակն ու սարյակը: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ է պատճառը, որ գրպաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և, ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն: Զատկական ձուն «օրինակն է բոլոր աշխարհի, և ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է, այսինքն՝ մեջը» (Թորգոմ վարդապետ): Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին. «Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և, ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի Արյամբ: Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»: Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի, կյանքի խորհրդանիշ: Ստ. Մալխասյանցը նշում է, որ«ծառ» նշանակում է նաև «ձվի սուր ծայրերը»: Այս բացատրությունը, որ ցույց է տալիս ձվի և կենաց ծառի գաղափարական առնչությունները, վկայում է, որ զատկական ձուն իր մեջ պարունակում է կյանքի հավերժության խորհուրդը: Ստորև ներկայացնեմ պլանը և նկարներ,

Նպատակը

. Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները ծեսերի և ազգային տոների մասին՝ մասնավորապես Զատիկի: Սովորեցնել կառուցել քերականորեն ճիշտ, արտահայտիչ և բովանդակալից խոսք: Դաստիարակել հայրենասիրություն:

Ընթացքը՝ խթանում

Խթանման փուլը դեռևս սկսցին Ծաղկազարդի՝ ցորենացանից և մինչև Զատիկ խնամեցինք: Մանկապարտեզ հրավիրեցինք Ս. Սարգիս եկեղեցու քահանա Տեր Հովսեփին: Շատ հետաքրքիր և ուսուցողական զրույց ունեցանք: Սովորեցինք տերունական <<Հայր Մեր>> աղոթքը և ստացանք Տեր Հովսեփի օրհնությունը: Թեմատիկ շաբաթվա մասին տեղյակ պահեցինք ծնողներին և խնդրեցինք աջակցել ու անմիջական մասնակցություն ունենալ մեր արարողակարգին:

Ծաբաթը սկսեցինք զրույցով, որի նպատակն էր երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի՝ մասնավորապես Սուրբ Զատկի մասին:

Զարգացրինք թիմային և զույգերով աշխատելու կարողություններ, սովորեցինք խմբային աշխատանքի պարզ կանոններ, հարստացրի բառապաշարը նոր բառերով և բառակապակցություններով: Իրար ավետեցինք <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, պատասխանելով <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Խմբասենյակի պատերին փակցրեցինք Զատկական թեմայով պաստառներ, բացիկներ, երեխաների կողմից պատրաստված խմբային աշխատանքներ, անհատական նկարներ: Սեղաններին դրված են ծլեցրած ցորեններ, որոնց մեջ դրեցինք ներկած ձվեր: Պատրաստել ենք ցանկությունների ծառ, որը նույնպես երեխաներն են ձևավորում իրենց պատրաստած ձվերով և ցանկություններով: Խմբասենյակը ձևավորված է ուռենու ճյուղերով, ձեռագործ տիկնիկներով՝ պատրաստված ազգային տարազի մոտիվներով, և Սուրբ Զատիկը խորհրդանշող այլ աքսեսուարներով:

Իմաստի ընկալում

Երեխաների պարզ ու մատչելի ներկայացվեց, որ Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից մեկը, որը խորհրդանշում է աշխարհի նորացումն ու բնության զարթոնքը: <<Զատիկ>> բառը կապվում է տիեզերական արարչագործության հետ և նշանակում է <<զատվել>>, <<բաժանվել>>: Քրիստոնեության շրջանում այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել են սերմը հողի մեջ թաղելու (մահ) և նրա ծլարձակման (հարություն) հետ: Երեխաների հետ ծանոթացանք և խաղացինք զատկական ծիսախաղեր՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի:

Ծանոթացանք նաև, որ Զատիկի ծեսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Ձուն առանձնահատուկ տեղ է գրավել պտղաբերության հնագույն ծեսերում: Այն համարել են աշխարհի օրինակ. Դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Ձուն համարել են նաև հարության խորհրդանիշ, որը փայփայելով նոր կյանքի սերմը, երկու ծնունդ է ունենում: Երեխաները արվեստի կենտրոնում ձուն նախշազարդեցին ձվի սպիտակուցով և պատկերազարդ անձեռոցիկներով: Ձու ներկելը կարևոր ավանդույթ է Հրաշափառ հարության տոնին: Երեխաները ձուն ջարդեցին և ուսումնասիրեցին կառուցվածքը: Ցորենի հատիկներով կառուցեցին յոթ ձու՝ աճման և նվազման կարգով: Խմորից ծեփեցին ձվեր, ապա կերտաձողով նախշազարդեցին դրանք, իսկ չորանալուց հետո ներկեցին:

Կշռադատում

1. Ի՞նչ է նշանակում զատիկ բառը:

2.Ի՞նչն է Զատկի տոնի խորհրդանիշը:

2.4 Ամանոր

Տարբեր ժամանակներում հայերն ունեցել են երեք նոր տարի, որոնք կոչվել են Նավասարդ, Ամանոր և Կաղանդ: Այս տոները տարբեր ժամանակներում նշվել են տարբեր օրերի. մարտի 21-ին, օգոստոսի 11-ին, հունվարին:

Հայերի թերևս ամենաավանդական նոր տարին նշվում էր մարտի 21-ին: Այս տոնը նաև Ծաղկըմուտ է կոչվել՝ վկայակոչելով գարնան գալուստը: Այդ օրը հայ արորդիները նշում են Վահագնի ծնունդը, որը հին հայերի գլխավոր տոնն է համարվել: Օրվա խորհուրդը կրակն էր: Վահագնը նաև ռազմի աստվածն էր և Աստղիկի սիրեցյալը: Նա կոչվում էր Վիշապաքաղ: Վահագնը մարմնավորում էր հուրը, զորությունը, և տոնի խորհուրդը հրով ու կրակով մաքրվելն ու Չարի ու Վիշապի պղծությունիցազատվելն էր: Ծնվելուն պես Վահագնը կռվի է բռնվում Չարի դեմ ու հաղթում նրան՝ Երկիրն ազատելով կործանումից: Վահագնը քաջության ու հզորության խորհրդանիշն էր, հայոց բանակի ապավենը: Հայ զինվորները մարտից առաջ Վահագնի աջակցությունն էին աղերսում:

Ամանոր նշանակում է նոր տարի: Բառի ծագումնաբանությունը բխում է բնապաշտական Ամանոր աստծուց, որ հենց մարմնավորում էր Նոր տարին, Երկրի և մոլորակների պտույտը: Ամանորի տոնակատարությունը նշվում էր հայոց նոր տարուն՝ Նավասարդին:

Հունվարի 1-ը օրացուցային նոր տարին է, իսկ հայոց եկեղեցին հունվարի 6-ը նշում է որպես Սուրբ Ծնունդ: Կաթոլիկ եկեղեցին այդ տոնը նշում է դեկտեմբերի 25-ին: Մինչև IV դարը բոլոր քրիստոնյաները Ս. Ծնունդը նշել են հունվարի 6-ին: Սակայն անգամ քրիստոնեության ընդունումից հետո հռոմեացիները շարունակում էին հեթանոսական տոներ նշել, և դեկտեմբերի 25-ին մեծ շուքով նշվում էր արևի պաշտամունքին նվիրված տոնը, ինչպես որ հայերը դեկտեմբերի 22-ին նշում են Միհրի՝ արևի ծննդյան օրը: Հեթանոսական ավանդույթները խափանելու համար 336 թ. Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես հռչակեց Հիսուս Քրիստոսի ծննդյան օր: Հետագայում Ասորիքում և գրեթե ողջ Արևելքում Քրիստոսի Ծննդյան տոնի օրը փոխադրվեց դեկտեմբերի 25-ին, իսկ հունվարի 6-ը մնաց որպես Տիրոջ Աստվածահայտնության, Մկրտության օր: Հունվարի 6-ին Ս.Ծննդյան տոնի հետ նշվում է նաև Զրօրհնեքը, որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուսի մկրտությունը: Զրօրհնեքին հայերը երբեմն նաև Տնօրհնեք են արել: Այդ ժամանակ քահանային տուն են հրավիրել, և վերջինս օրհնել է՝ տունն ազատելով չարքերից:

Հայոց դիցարանում Ամանորը պտղաբերության, բերքը պահպանող աստվածն էր: Ամանորի եղբայր Վանատուրը հյուրընկալության աստվածն էր, և նոր տարին նվիրված էր Ամանորին ու Վանատուրին: Ճիշտ է, հայոց մեջ տարբեր ժամանակներում նոր տարին տարբեր օրացույցներով ու ժամանակամիջոցում է նշվել, բայց դրանից տոնի էությունը չի փոխվել:

Ավանդաբար ամանորյա նախապատրաստությունները սկսվում էին տան ու բակի մաքրությունից: Այս արարողություններին մասնակից էին ընտանիքի բոլոր անդամները: Հունվարի 1-ի գիշերը աղբյուրից բերած ջրով լվացվում էր թոնրի շուրջը հավաքված

ընտանիքը: Մինչ օրս էլ տարեմուտից առաջ ամբողջ տունը մաքրվում է և թարմացվում: Տարեմուտի նախօրյակին կատարվող մաքրագործման արարողություններն ու ծեսերը գալիս են բնապաշտական ժամանակներից և հատուկ են բազում ժողովուրդների: Տարվա նորոգումը, վերածնունդը խորհրդանշական կապ ունեն մարմնական մաքրության և հոգևոր սրբության հետ (սուրբ բառը ևս նշանակում է մաքուր, անարատ): Մաքրությունը խորհրդանշում է սկիզբը, անապական, նախնական վիճակը, որով սկսվելու էր նոր տարին, արևի հերթական պտույտը, նոր տարեշրջանը, նոր ժամանակը:

Մաքրագործման արարողությունները նաև ներքին, հոգևոր բնույթ ունեին: Լոռիում, օրինակ, տանտիկինը մեղր էր քսում ընտանիքի բոլոր անդամների բերաններին, իսկ Համշենում կծու կերակուր ուտելն արգելվում էր, թթու խոսք ասելը՝ նույնպես: Այս սովորությունները կապվում էին խոսքի մոգության հետ: Համարվում էր, որ անցումային օրը յուրաքանչյուր չար խոսք կարող էր չարիք բերել ամբողջ տարվա համար, «խոսք-աղբը» կարող էր պղծել օրվա ծիսական մաքրությունը: Ընտանիքի բոլոր անդամները պետք է նոր զգեստներ հագնեին: Ընդունված էր գժտվածներին հաշտեցնել թե՛ տանը, թե՛ հասարակական միջավայրում: Տոնի առթիվ թարմ հաց էին թխում, եթե անգամ տանը հաց կար:

Ավանդական սովորության համաձայն՝ Ամանորի գիշերը (Կաղանդի գիշերը) շատերի տներում ճրագ էր վառվում, որպեսզի տան հաջողությունը չփախչեր: Նախկինում գերանը համարվել է ընտանիքի ամրության խորհրդանիշ, և տան մեծերը մեծ գերան են դրել կրակի մեջ, որը վառվել է մինչև Սուրբ Ծնունդ: Այդ կրակի վրա էլ պատրաստվել են Ս. Ծննդյան կերակուրները: Հավատում էին, որ դրա ածուխը պաշտպանում է կարկուտից: Հյուրերը պարտավոր էին մի կտոր փայտ ավելացնել կրակին: Գիշերը անպայման որևէ լույս վառ էին թողնում: Չարքերից պաշտպանվելու համար մութն ընկնելուն պես տանտիկինը տան շեմին մոխիր էր ցանում կամ ալյուրով դռանը խաչ անում: Գերանը, որը վառում էին նոր տարվա նախորդ երեկոյան, կոչվում էր «Տարեմտի քոթուկ», որի առկայծող կտորները հետո թաղում էին հանդերում՝ բերքի առատությունն ապահովելու համար: Օջախը վառ պահելը շատ կարևոր է եղել հայի համար, որովհետև, ըստ պատկերացումների, օջախի մեջ էին ապրում տան նախնիների հոգիները:

Այդ օրը խուսափում էին որևէ մեկին փոխ տալ, հատկապես՝ թթխմոր, դրամ: Առհասարակ որևէ ծախս չէին անում: Առավոտյան տան դուռը առաջինը տան մեծն էր բացում, որպեսզի հաջողությունը տնից անպակաս լինի: Վաղ առավոտյան նոր բերած ջուրը լցնում էին տան անկյունները՝ տան առատությունն ապահովելու համար: Միմյանց նվերներ էին տալիս, հատկապես՝ մեծերը փոքրերին: Ամանորին տան դուռը երբեք չէր փակվում, լույսերը չէին մարում:

Ճիշտ է, Ամանորի եղևնին հայկական ծագում չունի, սակայն հայերի մոտ վաղնջական ժամանակներից ծառի պաշտամունք է եղել: Հայ իրականության մեջ առանձնահատուկ է եղել սոսենու, ուռենու, բարդու և կաղնու պաշտամունքը: Մրգերով ու չրերով զարդարված Կենաց ծառը եղել է տոնի խորհրդանիշը և հավանաբար կաղանդ-կախանդ բառն առաջացել է կախելու գործընթացից: Կա նաև այլ բացատրություն կախանդ բառի վերաբերյալ. Ամանորի գիշերը երեխաները շրջում էին տներով և տների երդիկից կախում էին գոտիներից ամրացված իրենց գուլպաները, որպեսզի տնեցիք կաղանդչեքով լցնեին դրանք: Ենթադրաբար մերօրյա ամանորյա զարդարանքների մեջ կրակարանի մոտ կախված գուլպաները հայկական հին ամանորյա սովորություն են:

Ամեն դեպքում, ծառ զարդարելը զուտ հայկական երևույթ է եղել և մեզ է հասել վաղնջական ժամանակներից: Եվրոպայում ծառ և եղևնի զարդարել են միայն XVI դարից: Հնուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ձիթապտղի կամ խնկի ծառ:

Նոր տարվա երեկոյան ձիթենու համեմատաբար հաստ ճյուղը խրել են նախապես թխված մեծ հացի կամ բաղարջի մեջ: Այդ ճյուղը կոչվել է Կաղանդի ծառ: Տան անդամները նախ ընդեղենով զարդարում էին ճյուղը, այնուհետև տանտերը ճյուղը տանում էր եկեղեցի, քահանան օրհնում էր, իսկ հետո այն բերում էին տուն և ամրացնում գերանին: Տոնածառի խաղալիքները հասկերից, ընդեղենից (թվով յոթ) պատրաստված զարդարանքներ էին, որոնց վրա կախվում էին չարխափաններ, ինչպես նաև՝ մարդակերպ և կենդանակերպ թխվածքներ: Այսպիսով, ամեն ընտանիք իր համար պատրաստում էր Կենաց ծառը:

Կենաց ծառի կողքին կար ևս մեկ, սակայն ավելի փոքր ծառ, որի վրա մոմեր էին դրված: Այդ ծառը կոչվում է «չաթալ ծառ»: Այն պարտադիր ամեն տարի Կենաց ծառի կողքին պետք է դրված լիներ: Չաթալ ծառի վրա ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է իր համար մոմ վառեր: Իսկ տան մեծ մամիկի (ավագ տիկնոջ) մոմը պետք է առանձնահատուկ լիներ: Հին ժամանակներում Ամանորի գիշերը, երբ հավաքվում էին երեխաները, սկսում էին մամիկից չիր ու չամիչ ուզել: Բայց եթե մամիկի տվածը բավական չէր երեխաների համար, նրանք ցորենի հատիկներ էին գցում մամիկի վառած մոմի վրա՝ փորձելով հանգցնել: Եվ մամիկը ստիպված նրանց կրկին անուշեղեն էր տալիս:

Հայերն ունեցել են նաև իրենց «Ձմեռ պապը»՝ հանձին Կաղանդ պապի կամ Մեծ Պապուկի, որը, սակայն, ավելի շատ Բարեկենդանի տոնի կերպար էր, քան Ամանորի:

Ամանորի հետ է կապված գոտեկախի արարողությունը. տարեմուտի գիշերը երեխաների խմբերը պարելով շրջում էին փողոցներով և որևէ մեկի տանը մոտենալիս երգում էին: Երգերը բովանդակում էին բարեմաղթանքներ, ընտանիքի անդամների գովք և տոնական

կերակրատեսակների խնդրանք: Նրանք գոտիներով երդիկից փոքր տոպրակներ էին իջեցնում, որոնց մեջ տան մամիկը դնում էր մրգեր, հատուկ այդ նպատակով թխված խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն: Երեխաները, ստանալով անուշեղեններ, դրանց փոխարեն հայցում էին երկնքի բարի ուժերի հաճությունը: Իսկ աղջիկները ժապավենով իրար ամրացված կարմիր խնձորների փունջ էին ուղարկում իրենց փեսացուների տուն:

Տարվա առաջին օրը՝ լուսաբացին, տանտիկինը դուրս էր գալիս և յուղ քսում տան պատի այն հատվածին, ուր պիտի դիպչեր արևի առաջին շողը: Նա կարմիր շոր էր փռում տան շեմին, քանի որ տան շեմը համարվել է այն սահմանը, որտեղ հանդիպում են բարի ու չար ուժերը: Նաև մեղրով խաչ էին նկարում գոմի պատին՝ ի նշան առատության: Ծերունիները տան դրսի պատին իրենց բնորոշող առարկաներ էին նկարում, հաճախ՝ ալյուրով: Տան շեմի ու դրսի պատերի հետ կապված բոլոր արարողությունները կապված են նոր տարին ներս հրավիրելու, բարիքը տան մեջ առնելու հետ:

Ջավախքում տանտիկինն ու հարսները տարեհացը ձեռքներին դուրս էին գալիս և նայելով դեպի արևելք՝ ասում էին. «Դովլաթ, սարն ես, ձորն ես, արի տուն»: Ամանորի առաջին օրը սկզբում այցելում էին տոհմի մեծերին, ծնողներին, խնամիներին, քավորին, հարևաններին, գյուղապետին, քահանային: Ծնորհավորելու գնացողները երբեք դատարկաձեռն տուն չէին մտնում, առնվազն մի խնձոր էին ավելացնում սեղանի բարիքներին՝ բարեկեցության և երկարակեցության մաղթանքներով:

Ամանորը հայոց սիրված տոներից է և դրան երկար ու լրջորեն են պատրաստվում: Ամանորյա պատրաստությունները, անշուշտ, հիմնականում վերաբերում են տոնական սեղաններին: Ամանորը հայ եկեղեցական օրացույցով պահուց օր էր (պահքը սկսվում էր դեկտեմբերի 30-ի երեկոյան և ավարտվում հունվարի 5-ի երեկոյան, երբ եկեղեցիներում մատուցվում էր Ս.Ծննդյան Ճրագալույցի պատարագ), և հին հայերը նոր տարվա սեղանները զարդարում էին հիմնականում տարատեսակ չրերով, մրգերով, ընդեղենով, հատկապես լայն կիրառություն ունեին լոբին, ձավարեղենը, ոսպը, սիսեռը, բրինձը:

Մենք չգիտենք, թե որ ժամանակներից է Ամանորը պահուց համարվել, համենայն դեպս, մեր օրերում, անգամ Հայաստանի ամենահեռավոր բարձր լեռնային գյուղերում, Ամանորը երբևէ պահք չի ընկալվել, և մսեղենով լի սեղաններ են բացվել: Բացի այդ, հնում մարդկանց պահուստը հիմնականում եղել է մսեղեն և կաթնամթերք, և դժվար է պատկերացնել, որ հնարավոր լիներ պաս պահել ձմռան ամիսներին: Բացի այդ, Ամանորը ուրախ տոն է, և պահքի անհրաժեշտությունն ու պահանջը չկար: Ամանորյա պահքը հավանաբար վերջին հարյուրամյակների նորամուծություն է:

Ամանորյա սեղաններին պետք է լիներ առնվազն յոթ կերակրատեսակ: Այդ թվում պարտադիր էին տոլման, անուշապուրը, մայրամապուրը, տարեհացը, գաթաները, աղանձը: Ստորև ներկայացնեմ նկարներ.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

1. Նախադպրոցական երեխաների հայեցի դաստիարակության վառ օրինակ է Զատկի տոնակատարությունը մանկապարտեզում: Միջին խմբում անցկացրած թեմատիկ շաբաթը նվիրված էր այդ տոնին: Դաստիարակը իր առջև խնդիր էր դրել երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի, ժողովրդական խաղիկների, խաղերի մասին, և թե ինչ խորհուրդ են դրանք պարունակում:

Ճիշտ ընտրված նպատակը, մեթոդները, համապատասխան զարգացնող միջավայրը, արդյունավետ կերպով էին ներգործելլ երեխաների հուզական աշխարհի վրա, և նրանք շատ մեծ պատասխանատվությամբ էին վերաբերվում և կատարում իրենց հանձնարարված աշխատանքը: Բոլորն ակտիվ դերում էին և ամենակարևորը ողջ ընթացքում գտնվում էին դաստիարակի ուշադրության կենտրոնում: Երեխաների խոսքը համարժեք էր իրենց տարիքային չափորոշչային պահանջներին:

Շատ եմ կարևորում հետազոտվող թեման, քանի որ այն լուծում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բազմապիսի խնդիրներ՝ ազգային, ժողովրդական արժեքների հանդեպ: Կարևորվում են հայկական գեղեցիկ սովորույթները, կենցաղային ավանդույթները, ազգային և ժողովրդական տոները, որոնք նպաստում են արտահայտելու երեխաների սեփական հույզերն ու զգացմունքները:

Կոշի <Կվաշ> մանկապարտեզի մեթոդիստ Լ. Չիլինգարյան

Դաստիարակը պարապմունքը սկսեց ազգային երգի ուղեկցությամբ: Կիրառեց զրույցի, մտագրոհի, հարցեր-հարցադրումների, ցուցադրման խաղային մեթոդներ:

Դիդակտիկ նյութի առկայությունը ավելի ընկալելի դարձրին աշխատանքը: Կիրառվեցին տարբեր հնարքներ: Դաստիարակը երեխաներին ներգրավեց խաղային և խոսքային փոխկապակցվածության մեջ, որի շնորհիվ երեխաները ակտիվորեն մասնակցում էին ընդհանուր զրույցին: Երեխաների բառապաշարը հարստացավ պատկերավոր բառերով, մակդիրներով, նոր արտահայտություններով: Դաստիարակը խրախուսում և օգնում էր երեխաներին հարցերին պատասխանել ամբողջական նախադասություններով: Որը նպաստեց հասնել իր առջև դրված նպատակին:

Եզրակացություն

Այսպիսով ազգային տոների և ծեսերի կազմակերպումը անհատի ձևավորման և ներդաշնակ զարգացման առումով պարունակում է հսկայական ներուժ և դրա ուսուցումը նախադպրոցական տարիքի երեխաների միջավայրում ազգային մշակույթի յուրացման հիմնական միջոցներից է և անմիջականորեն առնչվում է մտավոր, բարոյական և գեղագիտական դաստիարակության խնդիրներին:

Հետազոտական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական, բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը: Կարևոր է, որ մանկապարտեզից երեխան իր հետ կյանք տանի բարություն, գեղեցկություն, ուրախություն և սիրո առաջին սերմերը:

Գրականության ցանկ

1. Ասյա Հովհաննիսյան, Լուսինե Ղույումչյան, <<Բարև փոքրիկ>>, 2009թ., էջ 10-24
2. Լալա Սմբատյան, <<Տոնական ողողանջներ>>, 2011թ., էջ 40-45, 55,
3. Նախաշավիղ, 2013թ., Էջ 59
4. Նախաշավիղ - 5. 2010
5. Ռ. Նահապետյան, <<Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգերը>>, 2004թ.
6. https://tatevsahakyanblog.wordpress.com/2018/06/14/1967/
7. www.qahana.am